ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2018թ

/նախնական/

Մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչություն

Մարզի վարչական տարածքը կազմում է		231013հա
գյուղատնտեսական հողատեսքերը կազմում են		**189607.4հա**
- ընդամենը ոռոգվող հողեր՝	-	6622.9. հա
- ընդամենը վարելահող՝	-	15628.3հա
որից ոռոգվող՝	-	2599.8 հա
բազմամյա տնկարկներ ընդ.	-	**3752 հա**
- պտուղ՝	-	2538 հա
- խաղող՝	-	1214հա
- բնակավայրի հողեր՝	-	5056.8հա
- որից տնամերձ		3140 հա
- որից ոռոգվող՝	-	1946.1հա
որից բազմամյա տնկարկներ	**-**	**1810հա**
- պտուղ	-	1503 հա
- խաղող	-	307հա
- խոտհարք	-	5060.4 հա
որից ոռոգվող	-	174.6. հա
- արոտ՝	-	92 452 հա
- այլ հողատեսքեր՝	-	74562.3. հա

Պետական աջակցության ծրագրերի շրջանակներում շուկայականից ցածր գներով, ՀՀ կառավարության համապատասխան որոշումներով մարզի հողօգտագործողներին հատկացվել է .

Պարարտանյութեր

- Կալիումական պարարտանյութ 17 տ
- Ֆոսֆորական պարարտանյութ 11.25 տ

Սերմեր

- Գարնանացան ցորեն 5.505տ
- Գարնանացան գարի 41.252տ
- Եգիպտացորեն 0.035տ
- Սիսեռ 0.043տ
- Առվույտ 1.504տ
- Կորնգան 3.088տ

Դիզելային վառելանյութ 11140 լ

Ներկայացվում է 2017-2018թթ ցանքերի և գյուղատնտեսական մթերքների արտադրության ծավալների համեմետական վերլուծությունը աղյուսակի տեսքով.

N	ԱՆՎԱՆՈՒՄԸ	Տարածությունը / հա			Համախառն բերքը / տ /		
		2017թ	2018թ	Տարբ.	2017	2018	տարբ
1	Հացահատիկև հատիկաընեղեն	2387	1907	-480	3438	4412	974
2	Բանջարեղեն	537	411	-124	11423	4400	-7023
3	Բոստան	34	31	-3	738	315	-423
4	Կարտոֆիլ	223	160	-64	4472	1853	-2619
5	Պտուղ, հատապտուղ	2514	2538	24	8100	4366	-3734
6	Խաղող	1200	1214	14	4065	5456	1391
7	Կերային	1975	1984	9	27045	32235	5190
8	Տեխնիկական	17	21	4	350	150	-200
8	Ընդ.ցանքատարածություն	5172	4514	-658			
9	Կաթ տ.				26500		
10	Միս տ.				7100		
11	Ձու մլն. հատ				21.8		
	Համախառն արտադրանքը մլրդ. դրամ				23.8		

Բույսերի պաշտպանության ծրագրով ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից
անվճար մարզի 6 համայնքների հատկացված 24կգ ռոդիֆակում թունանյութի միջոցով 300հա վարակված վարելահողերի և բազմամյա տնկարկների վրա իրականացվել է մկնանման կրծողների դեմ պայքարի աշխատանքներ :

<<ՌԶԳ>> ՀԿ-ի միջոցով Մարզում ստեղծվել են 19 անասնաբուժական կետեր, 2018թ սերմնավորվել է 2500գ կովեր՝ նպատակ ունենալով զարգացնել Շվից, Հոլշտին, Սիմենթալ ցեղատեսակները :Մարզի 5 համայնքների 26 բնակավայրերում կառուցվել և վերանորոգվել է 38 ջրելատեղ, 17 մակատեղ, 16 կացարան, 2 կթի սրահ, դեպի արոտ տանող 6 ճանապարհ՝ 12կմ, բարելավվել է 23հա դեգրադացված արոտ, արդյունքում 13.7հա արոտ հասանելի է դարձել մարզի բնակչության համար: 5 համայնքներում 300հա հողատարածքների վրա իրականացվել է գարու և վարսակի ցանք ՝ կորնգանի կամ առվույտի ենթացանքով:

Եղեգնաձորի պահածոների գործարանը 2018թ մթերել է 1602տ. պտուղ-բանջարեղեն /190տ պտուղ, 1412տ բանջարեղեն/, որը պակաս է է 2017թ համեմատ 100 տոննայով:

Մարզի համայնքներից արտահանվել է 270 տոննա ծիրան, միջին գինը 250 դրամ,

Արտադրված 5456տ /+1391տ 2017թ համեմատ/ խաղողից, մթերվել է 5003տ/+2639տ 2017թ համեմատ/, որից մարզի 11 վերամշակող ձեռնարկությունների կողմից մթերվել է 1836.2տ /+707տ 2017թ համեմատ/:

Ինը կաթ մթերող և վերամշակող ընկերությունները մթերել են 1145.7տ կաթ,միջին գինը 165 դրամ , արտադրվել է 97.5տ պանիր, ստեղծվել է 40 աշխատատեղ:

Գործող յոթ չրանոցները արտադրել են 35տ չիր,միջին գինը՝ 2400դր. ստեղծվել է 43 աշխատատեղ

Գործում են 22 սառնարանային տնտեսություններ/+3 2017թ համեմատ/ 657տ հզորությամբ:

Մարզի 8 համայնքներում առկա են 44 ջերմոցներ, 2,.4հա:

Գնդեվազի թռչնաբուծարանը ունի 45000թև թռչուն, արտադրվել է 10 80 000 ձու:

Առկա են 27 կոոպերատիվներ, որոնց անդամների ընդհանուր թիվը 1167 մարդ է : Կոոպերատիվներն ունեն հետևյալ ուղղվածությունը. չրի արտադրություն - 3, անասնապահություն-7, մրգի սառնարանային պահպանություն – 7, բուսաբուծություն-3, կաթի մթերում և վերամշակում - 3, գյուղատնտեսական աշխատանքների մեքենայական սպասարկում - 4:

Գործում են Ֆերմերային տնտեսություններ ընդ. 308 որից անասնապահություն՝ 123 հողագործություն՝ 185:

2018թ ընթացքում տարերային աղետների հետևանքով վնասվել են Զառիթափ, Մալիշկա, Արենի, և Եղեգիս համայնքների այգիներն ու ցանքատարածությունները.

ՏԵՂԵԿԱՆՔ 2018թ մարզի համայնքներում արտակարգ իրավիճակների հետևանքով վնասված տարածքների վերաբերյալ										
համայնք /բնակավայր/	մշակաբույս	ցրտահարված տարածքը /հա/	ցրտահարված տարածքը /%/	կարկտահարված տարածքը /հա/	կարկտահարված տարածքը%	քամի /հա/	միջին բերքը ց/հա	սպասվելիք բերքը/ց/	1կգ շուկ. գինը /դրամ/	վնասի չափը հազ. դրամ
Զառիթափ	կորիզավոր	64.2	96				35	2247	200	43142
Զառիթափ	ընկույզապտ.	55.2	96				22	1215	1100	128302
Զառիթափ	հնդավոր			18	90		31	558	200	10044
Զառիթափ	բանջար			4.51	90		190	822.33	218	17930.79
Զառիթափ	հատիկաընդ.			1.8	90		18	29.16	800	2332.8
Մալիշկա	կորիզավոր			27	30		54	1458	150	6561
Մալիշկա	խաղող			71	40		25	1775	200	14200
Արենի	կորիզավոր	99.06	65	6	35		100	10500	200	173815
Արենի	հնդավոր	4.6	65	22	40		80	2100	200	15146
Արենի	ընկույզապտ.	4.8	60	11	15		67	1058	1100	30855
Արենի	խաղող	4.5	13	29	16.3	0.2	80	2696	280	10278
Եղեգիս	կորիզավոր					0.02		50	200	200
Եղեգիս	հնդավոր			22.1	100		58	1281.8	245	31404.1
Եղեգիս	բանջար			0.014	100		250	3.5	300	105
		232.36		212.424		0.22		25793.79		484315.69
ԸՆԴԱՄԵՆԸ		445.004								

Կառավարության կողմից մասնակի փոխատուցվել է աղետներից տուժած 1551 շահառուների 9 119 435 դրամ:

Կառավարության կողմից մարզի սահմանամերձ 5 բնակավայրերի 59 շահառուների աշնանացան հացահատիկային մշակաբույսերի փաստացի ցանված յուրաքանչյուր հեկտարի հաշվով անհատույց տրամադրվել է 60 000դրամ:Ընդամենը ցանվել է 42.353հա , որի համար տրամադրվել է 2 552 100 դրամ:

2018թ ընթացքում ԳԶՀ Վայոց ձոր մարզային կառույցի կողմից իրականացվել է 22 ծրագրային դասընթաց, հայտատուների թրվը կազմել է 587, մասնակցել է 504 մարդ, որից հավաստագիր է ստացել 443-ը:

2018թ մարզի համայնքներում հիմնվել է մոտ 50 հա պտղի և խաղողի այգիներ, 34.4հա այգիներ ոռոգվում են կաթիլային եղանակով:

Մարզում գործում են երկու ձկնաբուծական տնտեսություններ, 2018թ արտադրվել է 11100կգ ձուկ;

Դեկտեմբերի 31-ի դրությամբ Զառիթափի սպանդանոցում սպանդի է ենթարկվել 1գ խ. ե. կ. / 130կգ/: Սպանդանոցի հզորությունը մեկ հերթափոխին կազմում է 30գ խոշոր և 600գ մանր եղջրավոր կենդանիներ:

2018 հունվարի 1-ի դրությամբ մարզում առկա է 18631 /-1124/ գլուխ խոշոր եղջերավոր անասուն, որից կովեր՝ 8039 /-380/ գլուխ, մանր եղջերավոր՝ 13817 /-2991/ գլուխ, խոզեր՝ 2097 /-422/ գլուխ , թռչուններ՝ 107552 /+40846/ թև և մեղվաընտանիք՝ 23199 /10/ փեթակ:

2018 թվականին ACBA-CREDIT AGRIKOLE բանկի միջոցով մարզի 944 գյուղացիական տնտեսություններին տրվել է շուրջ 1 362 955 463 դրամ գյուղատնտեսական վարկեր, որից 84 գյուղացիական տնտեսությունների տրամադրվել է 324 300 000դրամ սուբսիդավորված վարկեր, 12% տոկոսադրույքով, միջինը 3 տարի մարման ժամկետով: Պետության կողմից սուբսիդավորվել է վարկերի 7%-ը: Սահմանամերձ համայնքներին և ագրովերամշակող գյուղացիական կոոպերատիվներին տրված վարկերը սուբսիդավորվել են 9%-ով:

2010-2018թթ համայնքների կողմից ձեռք է բերվել 63 միավոր գյուղ տեխնիկա, իրենց գյուղ գործիքներով:

<<Եղեգնաձոր>> ՋՕԸ- ի կողմից իրականացվում է ջրամատակարարում ըստ ջրապահանջի: Հանձնված ջուր 10մլն 342 խ/մ, հասույթ 117մլն 893 հազ. դր, գանձումը 119մլն 071հազ. դր:

Մարզի Արենի, Աղավնաձոր, Ռինդ,Գնիշիկ և Գետափ համայնքներում տեղադրվել են յոթ հակակարկտային կայաններ,/560հա ծածկողականությամբ/, կարկտահարության դեմ պայքարի լիարժեք աշխատանքներ իրականացնելու համար անհրաժեշտ են ևս 20 հակակարկտային կայաններ:

Բնապահպանություն

Տարվա ընթացքում համակարգվել է մարզի տարածքում գործող անտառտնտեսությունում տարվող աշխատաքները՝ անտառների էկոլոգիական և սոցիալական նշանակության բարձրացման, անտառների վիճակի բարելավման, պահպանության, պաշտպանության, ընդլայնված վերարտադրության և արդյունավետ օգտագործման ուղղությամբ: Մշտական ուշադրության կենտրոնում է անտառների հակահրդեհային և կանխարգելիչ միջոցառումների ծրագրի իրականացման աշխատանքները: Մարզի տարածքում գործող անտառտնտեսության հաշվեկշռում գտնվող 13688 հա հողատարածքներից անտառածածկ է 10156 հա: ՈՒսումնասիրվել է մարզի տարածքում ջրերի և ընդերքի օգտագործման ու պահպանության վերաբերյալ բնապահպանական օրենսդրության պահանջների կիրառման ընթացքը: ՈՒսումնասիրությունների արդյունքում բացահայտված բացթողումները վերացնելու նպատակով առաջարկվել է ուժեղացնել տեսչական աշխատանքները ջրօգտագործող և ընդերք շահագործող տնտեսվարող սուբյեկտների գործունեությունը բնապահպանական օրեսդրությանը համապատասխանեցնելու ուղղությամբ:

Բնապահպանական պետական տեսչության Վայոց Ձորի տարածքային բաժնի, մարզային ոստիկանության կողմից իրականացված տեսչական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել է ապօրինի ծառահատման՝ 6 , ձկնագողության՝ 5, որսագողության 7, ավազակոճային խարնուրդի ապօրինի տեղափոխման 2 դեպք, բնությանը հասցված վնասը վերականգնված է:

Հաշվետու ժամանակաշրջանում ապօրինի ընդերք շահագործման, ինչպես նաև հողի բերրի շերտի օգտագործման կարգի խախտման դեպքեր չեն արձանագրվել:

Մարզում առկա է ՝

- ձկնաբուծական 2 տնտեսություն
- հանքային ջրերի 2 հանքավայր
- հանքային ջրերի շշալցման 2 գործարան
- քարի արդյունահանման 7 հանքավայր
- քարի վերամշակման 3 արտադրամաս

Գյուղատնտեսության և բնապահպանության վարչություն

09.01.2019